



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 30 » 06 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0114-21

Ձեռնարկողը՝

«ԲԻԼԴՄԱՍՏԵՐ» ՍՊԸ
ք. Երևան, Երզնկյան փ., 22

Գործունեությունը՝ Թալին համայնքի ԵԿ 110/0.8-0.8 կՎ 6300 կՎԱ «Թալին-2»
արևային կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0114-21
<30> 06 2021թ.

**Արագածոտնի մարզի Թալին համայնքի ԵԿ 110/0.8-0.8 կՎ 6300 կՎԱ
«ԹԱԼԻՆ-2» արևային կայանի աշխատանքների շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «ԲԻԼԴՄԱՍՏԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/,
/Բ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝ Արագածոտնի մարզ, Թալին համայնք

«ԲԻԼԴՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Արագածոտնի մարզի Թալին համայնքում իրականացնել արևային կայանի նախագծման, կառուցման և շահագործման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 3-րդ կետի գ) ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս.

«Թալին 2» արևային կայանի համար հայցվող տարածքը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին քաղաքի Գայի փողոցի 84 հասցեում:

Տարածքը բնութագրվում է 40.3627⁰ աշխարհագրական լայնության և 45.8526⁰ երկայնության կոորդինատներով, գտնվում է ծովի մակերևույթից 1544մ բարձրության վրա, Երևան-Գյումրի ավտոճանապարհի հարևանությամբ:

Ըստ ներկայացված հաշվետվության՝ արևային կայանի նախագծման, կառուցման և շահագործման աշխատանքները նախատեսվում են իրականացնել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում գտնվող 02-003-0224-0629 կադաստրային ծածկագրով 11.3471հա մակերեսով հողամասի՝ 7.4276հա մակերեսով հատվածում:



